

նուիրեց, իբր թեմական դպրանոցի հիմնադրամ:

Արամեանց Թիֆլիսում աջակցում էր նաև ազգային կրթական ընկերութիւններին թէ դրամական նպաստով եւ թէ իր անձնական մասնակցութեամբ: Նա՝ «Հայոց Ազգազրական Ընկերութեան» վարչութեան եռանդուն անդամներից մէկն էր: Նա վախճանուեց 1922ին Թիֆլիսում, իբրեւ չխառք, խեղճ եւ թշուառ վիճակի մէջ. ուսական բուհի վիճակն յետապահուողները զրկել էր նրան իր բոլոր կայքիցն ու պոքիցը...

(Շարունակելի):

ՍԱՐՈՒՅԵՆ



P. CHRYSOSTOMUS BAUR, Der heil. Johannes Chrysostomus und seine Zeit. Band I—II, München, Max Hueber, 1929—1930, S. XL + 332 + 412.

Յովհաննէս Ոսկերեանի անձն ու անունը շատ տեսակէտներով կապուած է հայ աշխարհին եւ գրականութեան հետ: Անոր կեանքի ողբերգութեան վերջին թատերակայրն եղաւ Հայաստան, անոր թանկագին գործերէն ստուար մաս մը թարգմանուեցաւ հայերէնի, մեծագոյնը Ն. դարուն՝ ոսկեղէն մատենագրութեան շրջանին. ուստի իրաւամբ Ոսկերեանը զգացուած է հայ հեղինակ: Այս բաղամաստիկ կապերը միանգամայն խոյճեր են, որոնք կը հրապուրեն զմեզ մերձեանքով այդ մեծ անձին. որչափ լուսաւորուի անոր գործունէութեան եւ զազախարներու պատկերը մեր աչքին առջեւ, որչափ ընդարձակուի մեր ծանոթութիւնն անոր անձնաւորութեան եւ նկարագրին հետ, այնչափ աւելի լաւ պիտի ըմբռնենք այն ազգեցութիւնը, զոր թողուցած է Ոսկերեանը հայ մատենագրութեան վրայ: Սերունդներ սնած եւ աճած են անոր գրութիւններուն լոյսին ու ջերմին տակ: Եթէ Նիկիւիորոս Կալիստոս (Պատմ. Եկեղ. ԺԳ. 2) վկայած է իր անձի մասին թէ «իոքը հասակէս սիրած եմ Ոսկերեանը. անոր ձայնին՝ իբրեւ Աստուծոյ ձայնին արանջ դրած եմ, եւ ինչ որ զիտեմ, ինչ որ եմ, իբե՛ն կը պարտիմ», նոյնը կրնան վկայել նաև շատ հայ մատենագիրներ, որոնց թուին մէջ նաև Ներսէս Շնորհալի մը:

Այս պատճառաւ ալ օգտակար կը համարիմ ծանօթացնել համառօտիւ հայ ընթերցողներուն գործք մը, որ պիտի օժանդակէ մեզի մերձուստ ճանչալու Յովհ. Ոսկերեանն եւ իր ժամանակը:

Ch. Baur է անոր հեղինակը, ծանօթ արդէն իբրեւ մասնագէտ իւր ճիւղին մէջ այն բաղամաստիկ գրութիւններով, որոնք նուիրուած էին Յովհ. Ոսկերեանի կենսագրութեան, գրութիւններուն, բարոյագիտութեան եւայլն:

Առաջիկայ հատորներս անոնց ամփոփումը, յօրինուածական գատուութիւնն եւ ամբողջացումը կը կազմեն: Անչափ հրատաւութիւնն, որ խոսացած է հոն, ընթերցողին դարմանքը կը շարժէ: Պատրաստողական մասը, ուր հեղինակն գործքին ծրագիրն եւ ազդեցութիւնը կը նշանակէ (էջ XI—XL), քննելով անոնց արժէքը, կը բովանդակէ հարուստ գրականութիւն մը Ոսկերեանի եւ իր ժամանակի շուրջ: Այսպէս հաստատուն հողի վրայ կոխած կը մերձենայ նիւթին:

Ա. հատորին վերնագիրն է Անտիոք, ուր Յովհ. Ոսկերեանը նկատի կ'առնուի իր ծննդավայրին մէջ: Անտիոքի բնութիւնը, քաղաքական կացութիւնը, եկեղեցական հանդամանքները, քաղաքակրթական պայմանները, որոնց մէջ աշխարհի լոյսը տեսաւ, սնաւ եւ դարգացաւ Ոսկերեանը, ունին իրենց նկարագրութիւնը պատշաճ չափով, գեղարուեստական ստուգ, պատմական ճշտութեամբ եւ վիպական հաճելիութեամբ: Ոչ մէկ կէտ, որ Ոսկերեանի եւ իւր կեանքի շրջանակին կը հայի, անտես դուրս ձգուած է հոն: Կը ցցուի ամէնուն մէջէն հզոր դէմքը զիւցադնին, որ հակառակ աննպաստ ժամանակին եւ հանգամանքներուն՝ ամուր քայլերով կ'ընթանայ յառաջ, կը կաղմակերպուի, երեւալու հրապարակի վրայ իբրեւ ճարտասան, իբրեւ պաշտօնեայ խորանին, ուսուցանելու, մեկնելու եւ ջատագովելու քրիստոնէական քարոզիչ (էջ 166—188), իբրեւ եկեղեցական մատենագիր (էջ 234—252), իբրեւ մեկնիչ (էջ 260—272), ջատագով (էջ 278—293), բարոյագէտ (էջ 307—322), երբ յօրինեց իւր լաւագոյն մեկնողականները՝ Եսայեայ, Մատթէի, Պաղոսի թղթերուն:

Արդէն մեծ հռչակ հանած Անտիոքի մէջ՝

կը հրաւիրուի Ոսկերեան՝ Կ. Պոլիս շարունակելու հոն իր գործունէութիւնն իբրեւ եպիսկոպոս:

Մայրաքաղաքի մէջ՝ արքունիքի մերձաւորութեան, ապականութեան կենդրոնը պիտի գործէր այժմ Մեծ ճարտասանը: Ժամանակն ու միջավայրը գեղեցիկ ներկայացուցած է Baur (Բ. էջ 23—39): Անկաշառ հովուապետը չէր կարողաչք գոցել գեղձումներուն եւ հզոր ճարտասանն որոտաց անխնայ արքունիքին եւ ժողովուրդին դէմ: Յատարքունիքին, յաջորդեց կրկին աքջացաւ գրգռութիւն, յաջորդեց կրկին աքսորը, վերջապէս կնքեց իր կեանքը քաղաքի հեռաւոր ճանապարհի վրայ Կողքեայի մէջ 407 Սեպտ. 14ին: Յուլիէն եւ հեղինակին նկարագրութիւններն այս գլուխներու մէջ:


Մատենը կը փակուի գլխով մը, ուր կը նկատուի «Ոսկերեանը դարերու կեանքին մէջ» (էջ 390—397): Հոս կը խօսի հեղինակը Մ. Որբնացուց յառաջ բերած մէկ նամակի մասին «Թուղթ Ատտիկեայ առ Սահակ», ուր Յովհաննէս արդէն «Ոսկերեանը» կ'անուանուի (Որբ. Գ. 57). «Կարելի չէ, կը գրէ Baur, վաւերական նկատել զայն» (էջ 377, համ. 394 ծան.): Հայոց մատենագրութեան հայոց անդրադարձութիւն մըն ալ կը գտնենք էջ 327, ուր Գէորգ Աղեքսանդրացուցն (Գլ. ԾԹ) խօսքը կը բերուի թէ Ոսկերեան իւր քաղաքակրթական «ամբողջ Հայաստան քրիստոնէայ ըրաւ եւ բաց աստի պատճառ եղաւ րէնի թարգմանութիւն» (համ. առ այս նաև րէնի թարգմանութիւն» (համ. առ այս նաև Յուլիէն Ա. 50—51). Baur կը ծանօթագրէ «Ս. Գրքի հայերէն թարգմանութիւնը (Սահակ մեծէն) Ն. դարու առաջին կէսէն է եւ յունարէնի վրայէն կատարուած (Մ. Որբ. Գ. 57): Ուրեմն անհնարին չէ որ հայերէն թարգմանութիւնը Յոյնի մը գրքման վրայ սկսած ըլլայ: Թէ այդ Յոյնը՝ ինքնին «յերսկած ըլլայ» քաղաքներու Ս. Ոսկերեան կրողը Հայս» քաղաքներու Ս. Ոսկերեանը է, որչափ զիտեմ՝ միայն Գէորգ Աղեքսանդրացին կը վկայէ: 404ին Մեսրոբ Հայկական գիրը գտաւ. այդ թուականը հայ մատենագրութեան ծննդեան տարին կը համարուի: Հայաստան այն ատեն մասամբ պարսիկ իշխանութեան տակ էր եւ թէ Ոսկերեան քաղաքի ժամանակ Պարսկաստանի հետ յարաբերութեան մէջ էր՝ կը տեսնենք իր նամակին ԺԳ, 5 (ԾԲ, 618): Սակայն եւ այնպէս այսչափս եզրակացութիւն մը հանելու չէ բաւեր»:

Ի հարկէ այս խուլ արձագանգ մըն է միայն այն հռչակին, զոր կը վայելէր Ոսկերեան Հայոց մէջ:

Հետաքրքրական է դարձեալ գիտնալ որ ԺԳ. եւ ԺԷ. դարերուն եւրոպացի բանասէրներէն ոմանք Ոսկերեանի կ'ընծայէին հայկական գրի գիտը (համ. Զարբանեւեան՝ Մատենագրարան, էջ 239—240): Զարբանեւեան կը գրէ դարձեալ «Ի վատիկանեան Մատենագրարանի որ ի Հռովմ՝ հոյակապ արհի մը մէջ, ուր ամենայն ազգաց այբուրենից ծանօթ հնարողաց դէմքերն պատկերադրուած են, մեր այբուրենքն իրենց հին երկաթագիր ձեւերով տրուած են ի ձեռս Ոսկերեանի, զինքն համարելով եւ կոչելով անոնց հեղինակ (Հայկ. հին Գաղութեան պատմ. 1886, էջ 21. համ. Ալիշան՝ Յուլիէն, Ա. 52):

Պիտի ուղէի ջերմապէս յանձնարարել Baurի այս աշխատութիւնն այն ամէնուն, որոնք կը տածեն Ոսկերեանի հանդէպ սէր, կը պարտալին Գ. դարու պատմութեամբ եւ կը փափազին խորապէս ըմբռնել Ոսկերեանի հայերէն մատենագրութեան հողին, շունչն եւ իմաստը:

\* Պ. Ն.



ԾԵՂԵՓՈՐՆՁ ԺԵՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

\* Նիկոլայու Եորգա (Nicolae Jorga) : — Ռուսմանիոյ մեծ գաւազը եւ հայ Ազգի լաւագոյն բարեկամը (ծնած 5 Յունիս 1871 ի Բուսուլայն), Յունիսին տօնեց իւր ծննդեան 60ամեակը:

Ն. Եորգա մին է այն գիտնականներէն, որոնք տիրացած բաղամաստիկ հմտութեան՝ վաստակաւոր եղած են զիտութեան այլ եւ այլ մարդերու մէջ յոգնաշատ արտադրութիւններով: Մասնաւորապէս Ռուսմանիոյ պատմութիւնն եղած է Ն. Եորգայի մասնաւորութիւնը. բայց իր հմտութիւնը նուաճած է նաև հեռաւոր աշխարհներ: Առանձին հատկութեամբ հետաքրքրուած է պատմութեամբ հայ ժողովրդեան, որուն հատուածները տեսած է նաև իր շուրջը: Ռուսմանիոյ պատմութեան նուիրած աշխատութիւններու մէջ յաճախ անդրադարձած է հայ-ուսմանա-